Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՐՕՏԸ

891.99
Ա-20

Ա-ԴՕ

91.99
2-20
24 MAY 2005
06 DEC 2010

Ա-ԴՕ

— 3 —

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՐՕՏԸ

9758

Ս. - ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1905

1746

-.01. 2013

Доз. ценз. С.-Петербургъ 10 Декабря 1904 г.



1585
47

„Пушкинская Скоропечатня" Лештуковъ пер. 4

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՐՕՏԸ

Շաբաթ օր էր...

Գաղթական Մուրադը իր նկուղը դարձաւ յուզված, վրդովուած։

Նրա շրթունքները դողդողում էին, ներսը ալեկոծվում։ Տեսքը սոսկալի էր, մի դեղնութիւն անցել էր յուզված դէմքի վրայով։

Թէև խանութպաններից մի քանիսը դրեցին նրա անվստահօրէն մեկնած ձեռքը մի քանի կոպէկներ, բայց մէկի վարմունքը գաժան էր։

Անիրեսներ...

Լսվեց «դախլի» յետևից մի խռպոտ ձայն։ Այդ բառը խայթեց Մուրադի սիրտը։ Քրդի սրի խայթոցը աւելի տանելի էր, քան այդ բառը։

Երկու շաբաթից աւելի փակված նկուղում նա տանջվում էր կրծքի ցաւից։ Սրբատաշ ահագին քարը շալակին փայտեա սանդուխները բարձրանալ այլևս անկարող էր, իսկ երկրացիները ճրանից էլ թշուառ էին և նա առաջին անգամ վճռեց մուրալ, առաջին անգամ փայտը նեցուկ առած խանութների շարքը մտաւ։ Ահա թէ ինչու նա չէր կարող երևակայել խայթի այն ուժը, որ մուրացկանը ընդունում էր բարի մարդկանց կոպէկների հետ միասին մէջ առ մէջ։

Խայթոցը սոսկալի էր... Մուրադի ձեռքը դողդողաց, կոպէկները շաղ անցան, նա մի բոպէ հաւասարակշռութիւնը կորցրեց, քիչ մնաց որ ցած գլորվէր, բայց հաղիւ ուշքի գալով կարողացաւ իրեն պահել։ Խելագարի պէս պտոյտ եկաւ, երեսը դարձրեց դէպի տուն, շպրտեց անսիրտ խանութպանի երեսին խանութի աշակերտի դեռնից հաւաքած կոպէկները և շտապով հեռացաւ։

Նա տուն դարձաւ ուժասպառ, չկարողանալով ոտքի վրա կանգնել։ Ձեռքը հասցրեց դեռնին և նեցուկ տալով փորձեց կամացուկ պարկել, բայց բազուկը չ'հնազանդվեց նրան և նա գլորվեց փալասի կտորի վրա, որպէս փայտը և անշարժ մնաց։

Այդ նրա պարկելու տեղն էր...

Երբեմն մէկ, երբեմն միւս կողի վրա շուռ գալով տանջւում էր նա այդ օրվայ կրած խայթոցից, նրա վիրաւորված ինքնասիրութիւնը կրծում էր նրա սիրտը, մտաբերում էր նա սոսկալի, արիւնոտ ենցեալը, համեմատում էր քրդից ընդունած վէրքը այդ օրվայ ստացած վիրաւորանքի հետ... Վերջինը ծանր էր առաջինից։

Այսպէս նա երկար տանջվում էր մէկ կողքից միւսի վրայ շուռ գալով։

Վերջապէս ծանրացան նրա կոպերը, զգաց երկար յուզմունքից առաջացած յոգնածութիւն և ընկաւ տեսիլների մէջ։

Եւ ահա նրա աչքերին պատկերանում է իր հայրենի գիւղը դարնանային բոլոր գեղեցկութիւններով։ Սար ու ձոր վխտում, կանանչին են տալիս, առվակը խոխոջով անմեղ մանկան պէս վազում, ոստոստում է լանջերի միջով, դաշտը բուրում է անուշ բուրմունքով, կանաչ թաւիշը մեղմիկ զեփիւռից ծփում, սփսփում է, իսկ ինքը մաքը բռնաց գոյգ լծկանի ծանր քայլերով արտի փխրուն շերտերը շուռ տալով վար ու ցանքն անում և իր գեղջկական մեղեդին միախառնելով սոխակի դայլայլիկներին հեռուն ու հեռուն տարածում նրա մելամաղձոտ բայց դուրեկան հնչիւնները։

Արևը մօտենում է իր մուտքին, նա հանդարտիկ ծածկվում է լեռների յետևը, հակառակ կողմից գլուխ է տալիս արծաթափայլ լուսինը, դաշտը գատարկվում է, գիւղը կենդանանում։ Դաշտից վերադարձող նախիրի բառաչը, կայտառ մանուկների վազվզոցն ու աղմուկը, մաճկալի ու հոտաղի բղաւոցը լցրել են գիւղի փողոցները և գեղջկական այս համերգի միջոցին վերադառնում է Մուրադը գոյգ եզները առաջը արած նրանց լծից քարշ ընկած արօրը։ Աջ ու ձախ իր սովորական ողջոյնը տալով հասնում է տուն, ընդառաջ է գալիս անդրանիկ աղջիկը— գեղեցիկ Խօսէն-եզների վրայից լուծը վերցնելու, կինը-Սինամը կովերն է կրթում, փոքրիկ Վարդանը հորթի ականջից բռնած համբոյրներ է դրոշմում նրա թաց դունչին, իսկ ամենից փոքրերը, Մրկոն ու Սալվին, ընդառաջ վազելով մօտենում են հօրը, քարշ ընկնում փեշերից ու ճվճվում ափõ... ափõ...

Տեսիլի այս վարկեանը սթափեցրեց Մուրադին, կարօտի տանջանքով տանջվող սիրտը վարկեանական խաբուսիկ անուրջ-

ների մէջ, բաբախեց, մի ցնցում անցաւ նրա մարմնի միջով և յօդնած կոպերի տակից հայացքը ձգելով խռնաւ նկուղու առաստաղին մի սառ օդ անցաւ նրա դէմքի վրայով։ Նա նորից ընկաւ անուրջների մէջ, օտարոտի տեսիլները յաջորդեցին միմեանց և այս անգամ Մուրադին պատկերացաւ տեսիլների ամենասոսկալին։

Ցանկարծ զինված քրդերի մի խումբ ներս խուժեց իր տունը, նրանցից մէկը մերկացրեց սուրը և առաջին հարվածով փոքրիկ Վարդանի գլուխը անջատեց մարմնից, մանուկը վերջին ցնցումները գործեց։ Երկու այլ քրդեր դուրս քաշեցին գեղեցիկ Խոսէին, Սինամը կտրեց նրանց առաջը, երկու սրեր միաժամանակ շողշողացին և Սինամը մի սուր ճիչ արձակելով փռվեց գետնի վրա։ Մի չորրորդը բռնեց փոքրիկ Մկոյի ոտերից և ամբողջ ուժով մանկան պատեցնելով օդի մէջ գլուխը ծեփեց պատին, մի հատիկ ճիչ միմիայն լսվեց։ Ապա դարձաւ դէպի ինքը —Մուրադը—հրացանը պայթեց, այդ բոպէին կրակը բոլորեց տան չորս կողմը, Սալվին մնաց կատաղի բոցերի մէջ...

Մուրադը վեր թռաւ, սարսափած ամբողջ մարմնով դողդողում էր, նրա կուրծքը բարձրանում իջնում էր... ձեռքերը տարածեց օդի մէջ, կարծէք մի բան ուզում էր խլել, նայեց շուրջը, հրդեհ չ'կար, մի ծանրութիւն վերացաւ սրտի վրայից, մի անհուն թեթևութիւն զգաց նա, բայց այդ բոլորը բոպէական էին։ Աչքը ընկաւ չրի խեցիին, հնմաշների պարկին, մթութեան մէջ նկարվեցին մերկ սառը պատերը, փչեց գերեզմանային խոնաւ օդ, ականջին գիպաւ այն ծանր խայթող խօսքը և նրան պատկերացաւ իրականութիւնը...

Այդ բոպէն սոսկալի էր... Մուրադի հոգին երբէք այն ասպիճան չէր վշտացել, ինչպէս այժմ։ Նրա կոպերը վարկենապէս յետ գնացին, աչքի բիբերը դուրս ընկան, երեսի կնճիռները խոժոռվեցին և մի սոսկալի կատաղութիւն պիրեց նրան։

— Ախ դորէք, դոր դժոխոց բոցեր, ծիկել վառէք ինչ վառիք իմ դաւկներին։ Բրդու թրեր ծիկել շշատէք, ինչ շշատիկ իմ ազիզներին։ Երնէկ ինոնց, օր ինկան ուրենց օջաղի փլատակներաց տակ... Երնէկ ինոնց օր չիլան քօչկան և էս դարդեր տեսան... Ախ դորես դոր իմ անուշ էրկիր, իմ քաղցր վաթան, իմ տուն տեղ, Մառան, իմ արա ու արօտ... Ախ չ'մեռնէի մէկել տրսնէի իմ անուշ վաթան, թըղ նոր Աստուած խոգիս առնէր...։

Այս խօսքերը դուրս էին թռչում նրա սրտի խորքից որպէս հեղեղը, նրա մէջ խօսում էր հայրենիքի կարօտը, նա տանջվում էր այդ կարօտի տանջանքով, նա ներկայացնում էր մի կատաղի բոցը։

Բայց ով էր Մուրադը։

Մի գաղթական...

Իսկ գաղթականը նա է, որը զուրկ գլուխը գնելու տեղից մի կտոր չոր հացը կուլ է տալիս արցունքով թռջած, որի բերանից շարունակ կ'լսէք Ախ Վաթան... Ախ Էրկիր...

Գաղթական Մուրադը Վանի վիլայէթից էր, Արճէշ գաւառի Ախսրան գիւղացի։ Ընտանիքի կողմից մխիթարված,

ապրուստից զոհ, գիւղի մէջ յարգված, բնաւորութեամբ բարի, պատվասէր մի մարդ էր։ Սակայն այն օրից, երբ Արճէշը տակն ու վրա եղաւ, Ախսարանը աւերվեց, Մուրադը վիրաւոր հոգիւ կարողացաւ գաղթականների հետ փախչել և մարդկային այդ սպանդանոցից ազատվել։ Բայց հեշտ չէր կորցնել ամեն ինչ, տեսնել իր օջաղը աւերված, իսկ աւերակները հարազատների արիւնով ներկված։ Այդ օրվանից կսկիծն ու վիշտը բուն դրեցին նրա սրտում, նրա թոքերը սկսեցին հիւծվել, մաշվել։ Բայց պատվասէր Մուրադը, չնայած իր սիրտը կրծող այդ ախտին շարունակում էր աշխատել շինութիւնների վրա, մինչև որ բոլորովին ուժասպառ եղաւ... Ոտերը այլ ևս նրան չէին հնազանդվում, ձեռքերը դրկվելէին քար բարձրացնելու ընդունակութիւնից և նա առաջին անգամ փորձեց ձեռք մեկնել, բայց հէնց առաջին անգամ էլ նա կրեց մի վիրաւորանք, որը աւելի ծանր էր, քան նեռի ուժգին հարվածը։

Կար մի ժամանակ, երբ նրա օջաղը շէն, նրա դուռը բաց օրը հարիւր մարդ մտնում կուշտ փորով դուրս էր գնում, երբ պարկը լցրած Սինամի տված լոշերով հեռանում էր աղքատը օրհնիքներ տեղալով, երբ չքաւոր զրացին ապրում էր նրա անով, իսկ այսօր նա կարօտ մի կտոր չոր հացի հալածվում էր որպէս աներես մուրացկանը։

Ինչպէս այդ բոպէին գեաինը չ'պատրաստվեց նրան կուլ տար, մի կայծակ ներքան մոխիր չ'դարձրեց։ Էլ ինչպէս ապրեր նա այդ անսիրտ երկրի մէջ, նայեր այն մարդկանց երեսին, որոնք «Աներես» բառը դրոշմել էին նրա ճակատին։ Էլ ինչպէս երևար այն տեղ, որտեղ նայում էին նրա վրա, որպէս ամօթը կորցրածի վրա։

Ո՛չ, ո՛չ, թողնել, հեռանալ այստեղից, այս անսիրտ աշխարհից, որը դժողք դառած լափում է մարդուն... Գնալ տեսնել նորից աւերված տունը, սիրելիների գերեզմանները, կամ այն տեղը, որտեղ նրանք ընկան տանջանքներով, համբուրել այն հողը, որտեղ կոխել էին հարազատների ոտքերը և ապա մեռնել։

Բայց ինչպէս անցնել այդ չափ տարածութիւնը, ուժասպառ ոտներով չափել այդքան սարեր ու ձորեր...

Այսպէս երկար տանջվում էր Մուրադը մտածմունքների մէջ, միևնոյն ժամանակ չ'կարողանալով մոռանալ այն վիրաւորանքը, որ նա ընդունել էր այդ օրը։

Ցուզմունքը կրկնապատկվում էր, շունչը կտրվում, նա շուռ եկաւ միւս կողքի վրա, տախտակ հաղը քերեց նրա կոկորդը, դէմքը կնճռվեց, իսկ այդ կնճիռների մէջ նկատելի էր թէ վիշտ և թէ տանջանք։ Նա վերցրեց ջրի խեցին, մոտեցրեց շրթունքներին, նրա լեղուն չօրանում էր։ Կրկին շուռ անցաւ միւս կողքի վրա, դունատ երեսը,ծածկեց ձեռքերի մէջ, այդպէս յարմար էր, նորից խորասուզվեց տխուր մտածմունքների մէջ և ինչեր նորից չանցան ու դարձան նրա յիշողութեան մէջ անցած գնացած տխուր և ուրախ բոպէներից...

Բայց ներկան սոսկալի էր։

Պէտք էր հեռանալ, փախչել այս ան-

սիրտ աշխարհից, պետք էր շունչ փչել հայրենի ավերակների մեջ, հանգչել հարազատների հետ միասին...

Այս մտածմունքների հետ դուռը կամացուկ բացվեց և արեգակի երեկոյան ճառագայթների հետ ներս մտավ արևից սևացած և թոզի մեջ կորած մի մարդ: Նրա արտաքինը ոչ մի կասկած չէր թողնում, որ նա նույնպես գաղթական էր:

Մուրադը աչքերը բացեց, նրա մոտ կանգնած էր համագյուղացի Ապրոն: Մի ակնթարթում հիվանդ մարդը թռավ տեղից, փաթաթվեց նորեկի պարանոցով և անշարժ մնաց չ'կարողանալով յուզմունքից արտասանել և ոչ մի խոսք, տարիքով մարդը երեխայի պես հեկեկում էր: Այս տարօրինակ թվաց Ապրոյին: Առողջ կազմը մի քանի շաբաթների ընթացքում քայքայվել էր, նա նման էր մարվող ճրագին: Եվ այս բոլորը այնպես ազդեցին Ապրոյի վրա, որ նա նույնպես զգացվեց, նա նույնպես արտասվեց, նույնպես հեկեկաց, որպես մանուկը: Րոպեն սրտաշարժ էր, տեսարանը յուզիչ... Անգթությունների այս երկու վկաները, որպես մարմնացյալ թշվառներ դրկախառնված երկար ողբում էին... կարծես տարրերքն էլ ողբում էր...

Վերջապես խոսեց Մուրադը:

«Ապրո ջան, օտացդ մեռնիմ, փախնենք էս տեղաց, որ գոգան դարձէ ձիկ կ'լափէ... տար, տար ձիկ, տար իմ վաթան, իմ անուշ երկիր, թող էն կանաչ խոտերաց վրա իմ աչքերը փակեն...»

Մուրադը փղձկում էր, այդ խոսքերի հետ դուրս էին ընկնում նրա սրտի կտոր-

ները, նրա ձայնը նմանում էր զգացմունքների մի հեղեղի:

Ապրոյի ջանքերը զուր անցան Մուրադին յետ կանգնեցնել այդ մտքից:

— Մուրադ ջան, ես էլ կուզեմ փախնել էս տեղաց, էրթալ երկիր, էնտեղ մեռնել, չ'խօ էրկու ամսէն աւել ժուռ էկայ Բագու, Թֆլիս, Բաթում պուճախմ չեղաւ, որ գլեօխս դնի. էլ մէն կռով, էլ մէն կռտկով փօշման յեա դարձայ, դօ քանի մը էրկրացիներու խետ երկիր կերթամ, դու խիւանդես կեցի, աղէկցի սօրա կը գաս:

Ապրոյի խոսքերը կիսատ մնացին, Մուրադը փարեց նրա պարանոցով հեկեկաց...

«Ապրո ջան, օտացդ մեռնիմ, թէ Աստուած սիրես ձիկ մի թող էստեղ, թէ խոդիտ սիրես ձիկ էլ տար խըդ քե... Դու ու քեօ Աստուած, դու ու քեօ խոդքիդ մենակ մի էրթա ձիկ էլ տար խըդ քե, երկրի կարօտը օտներացս ուժ կը տայ:»

Ապրոն ընկճվեց—կարոտի այդ հեղեղը նրան հմայեց...

— Երթանք Մուրադ ջան, Աստուած քե իմդատ, քանի մը փարա կա խըդ ձի, առնենք քիչ մը խաց բռնենք էրկրի ճամբախ, դէհ ժողվրտվի...

Մուրադը նորից հեկեկաց, բայց այս անգամ սրտի ուրախությունից, փարեց Ապրոյին, խլեց նրա կոշտացած ձեռքերը, մօտեցրեց շրթունքներին, արցունքի կաթիլները թացացրին այդ կոշտացած ձեռքերը, որոնց ամուր բռնած տարիքով մարդը համբուրում էր անվերջ:

Վերջապես զիջելով Ապրոյի թախանձանքներին բաց թողեց Մուրադը նրա ձեռքերը, ուղղեց գլխի փաթեթը, վրա

բերեց մերկութիւնը ծածկող գինուորական շինելի փէշերը ու վրայից ամուր ծգեց գոտին, մօտեցաւ իր պարկին, քըրքըրված փալասի կտորը դրեց նրա մէջ, շալակեց և վերցնելով վերջին օրերի միակ նեցուկ փայտը Ապրօյի հետ դուրս եկան խաւար նկուղից: Ապա մտաւ բարի տան տիրուջ սենեակը բռնեց նրա ձեռքը և երախտագէտ սրտով շնորհակալութիւն յայտնեց ծրիտարար աված այդ նկուղի համար և երկար օրհնիքներ տեղալով նրա տուն ու տեղի, նրա որդկերանց վրա «ես էրկիր կերթամ» ասաց ու դուրս եկաւ: Մինչև որ տանտէրը կ'մտնէր պահարան մի փոքր հաց բերելու Մուրադի համար, նրանք այլ ևս չ'կային: Տանտէրը վազեց մինչև փողոցի դուռը, կանչեց, ձայն տվեց նրանց յետևից, բայց անօգուտ... Գաղթականները գնում էին... Գնում էին շտապով, առանց յետ նայելու...

Մուրադը քայլում էր որպէս ասոյդ մարդը, կարծես նրա կրծքի մէջ բուն դրրած չը լինէր մաշող թոքախտը:

Նրանք աւելի ևս արագացրին իրենց քայլերը, մօտեցան փողոցի ծայրին, շուռ եկան և այլ ևս չերևացին: Բարի տան տէրը երկար կանգնած չէր կարողանում իրեն հաշիւ տալ, թէ ինչպէս ուժասպառ մարդը առողջացել էր...

Նրանք գնում էին, նրանց տանում էր երկրի կարօտը...

ՀՍՍՀ-ՍՍՀՄ

ՀՀ Ազգային գրադարան
NL0328179

17.467

Նոյն կազմողի

1) Մակեդոնեա - սպառված . . . . 7 կ.
2) Ռեբեկա սպառված . . . . . 3 „

Գինը 5 կ.